

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ
ԱՄԲՈՂՋԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, 2012-2013
THE MAIN RESULTS OF THE HOUSEHOLD INTEGRATED LIVING CONDITIONS
SURVEY FOR 2012-2013

Հետազոտության իրականացման համար կատարվել է ըստ մարզերի ստրատիֆիկացված երկաստիճան ընտրանք: Ընտրանքի ձևավորման համար օգտագործվել է համակարգված ներկայացուցչական հավանականային ընտրանքի մեթոդ:

Հետազոտությունն իրականացվել է հանրապետության բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերում: Տնային տնտեսությունների (SS) ընտրությունը կատարվել է ամսական պարբերականությամբ՝ ռոտացիոն եղանակով:

2013թ.-ին ընտրվել է 5 184 տնային տնտեսություն, որից 3 348-ը՝ քաղաքային, իսկ 1 836-ը՝ գյուղական բնակավայրերից: Հետազոտության տվյալներն ապահովում են նվազագույն ներկայացուցչականություն՝ մարզային կտրրվածքով:

Հետազոտության հիմքում դրված հասկացությունները, ցուցանիշների համախումբը և դրանց հաշվարկման հիմքում ընկած մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում են Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) և (կամ) Եվրամիության վիճակագրական գրասենյակի (Եվրոստատ) կողմից առաջարկվող սահմանումներին ու դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները՝ միաժամանակ ապահովելով համադրելիությունը միջազգային համանման ցուցանիշների հետ:

Բնակչության տնտեսական ակտիվության կարգավիճակը բնութագրող ցուցանիշները հիմնված են **15-75** տարեկան **առկա բնակչության** պատասխանների՝ անձնական (սուբյեկտիվ) գնահատականների վրա, ինչի արդյունքում ստացված տվյալներն առանձին դեպքերում կարող են տարբերվել իրականությունից:

Դիտարկվող ժամանակահատվածը եղել է հետազոտվող յուրաքանչյուր ամսում հարցմանը նախորդող **վերջին մեկ շաբաթը**:

Յուրաքանչյուր հարցվող ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի դասակարգվել է միմյանց բացառող հետևյալ երեք խմբերի՝ **զբաղված, գործազուրկ, տնտեսապես ոչ ակտիվ**:

A two stage stratified sample by regions (marzes) has been designed to conduct the survey. The method of systematic representative probability sampling was used to frame the sample.

The survey has been conducted in all urban and rural settlements of the republic. The selection of households (HH) has been done monthly by the rotation principle.

A total of 5 184 households were selected for 2013, of which 3 348 and 1 836 households from urban and rural communities, respectively. Survey data provided for the minimum representativeness by marzes' level.

The concepts, set of indicators and methodology of calculation underlying the survey basically comply with the definitions and concepts recommended by the ILO and (or) Eurostat, while taking into account the peculiarities of their application in Armenia to the extent possible, at the same time, by providing the comparability with the international similar indicators.

The following findings on economic activity status of population are based on the responses / on the personal (subjective) assessment of **15-75 year-old de facto population**; therefore the received data in some cases can differ from reality.

Reference period was the **last one week** preceding the survey.

Each respondent was classified into the following mutually exclusive groups by status of economic activity – **employed, unemployed and population not economically active (inactive)**.